Պարույր Սևակ

Միայնակ զբոսանք

Հիմարացած ու վերացած, խեղճ ու վսեմ՝
Կանգնել եմ ես այս պարզերես երկնքի դեմ
Ու նայում եմ՝
Հորթուկի պես
Եվ կամ քրմի՝
Լիությունից թեթևացա՛ծ.
Եվ... հավատում եմ աստըծուն:
Ձեռքըս գցում այս ծոմոված առվի վզից
Ու ձգելով-բարձրացնելով գլխիցըս վեր՝
Ստեղծում եմ մի պսպղուն աղեղ-կամար,
Որ չի՛ փլվի,
Քանի դեռ ես չեմ կամեցել:
Մոտեցնում եմ հետո երկու ափըս իրար՝
Ծափ տալու պես,
Եվ՝ հնազանդ իմ ափերի այդ շարժումին՝
Քարափները գալի՛ս իրար,
Միանում են իրար անձայն...
Եվ ինքըս ինձ հավատալով՝
Է՛լ աստըծուն չե՛մ հավատում:
Ափս եմ քսում հողի դեմքին,
Անբաղաձայն

Ու նախնական մի կենտ բառ եմ ասում նրան,
Ու նա - շոյված՝ կատվի նման - մեջքը ցցում
Եվ իր երկար պոչն է շարժում՝ գետի տեսքով:
Ու ես կրկին հիմարացած և ինքնագոհ՝
Շոյելու պես ապտակում եմ
Այս պարզերես լուռ երկնքին
Ու ժպտում եմ՝
Մանուկի պես
Եվ կամ մոգի՝
Նորից լցվա՛ծ-լրիվացա՛ծ...
Եվ... հասկանում եմ աստղծուն:

08. XII.1962թ.
Երևան